ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ УПРАВЛЕН

№ 01-80

«02» 10 2012թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ.
Тел. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա. Դահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 2012 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումը , սեպտեմբեր ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրություններ չունենք :

Առդիր՝ 2 թերթ

Ոսկեհատի համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

22 ՍԵՊՏ
Ստ՝ 8503-12
02 10 2012

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

«05» 09 2012թ. գ.Ոսկեհատ

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴՐԱՍՏԱՄԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիրի մարզի, Ոսկեհատ գյուղի բնակիչ Դրաստամատ Պետրոսյանը դիմել է, Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ, Բարեկամության 85/12բ հասցեում գտնվող բնակավայրի, տնամերձ ինքնակամ զբաղեցրած 153.0 քմ հողամասի և նշված հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չփահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վերականգնել Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ, Բարեկամության 85/12բ հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Դրաստամատ

Պետրոսյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 153.0քմ հողամասի և նշված հողամասի վրա գտնվող բնակելի տունը:
2.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենքի-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:
4.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Դրաստամատ Պետրոսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ